

սեն, մի Աստուած Հայր ամենակալ, արարիչ երկնի եւ երկրի, եւ մի տէր Յիսուս Քրիստոս: “Երկնի եւ երկրի”, բառերը “Նի-
կիականին չեն, մերկնին են: Եւթէն իրեն առ եպիսկոպոսունա
Շըմարեական թղթոյն մէջ ալ սոյն մեր հանգանակին ուրիշ
մատուցքը յառաջ կը բերէ: Ասկէ զրեթէ զար մը ետքը կը զաննեք
աս հանգանակն իբրեւ “Նիկիական Հարց զործ ամբողջապէս յա-
ռաջ բերուած “Ներսիսի կաթողիկոսի Շինողի” եւ անոր աթոռա-
կցաց անուամբ առ Յոյն գրուած թղթոյն մէջ, ինչպէս որ Սեբեոսի
եպիսկոպոսի” որն որ 787 զարու հեղինակ է, Հայոց պատմութեան
գրքին վերջերը կը կարդանք: “Նոյն դարուն մէջն է որ Առմիտաս
կաթողիկոս նոյն հանգանակը պարզապէս “Նիկիական կը համարի
առանց տարակուսի մը, ինչպէս որ իրեն դեռ Հրատարակուած մէկ
ճառէն յայտնի է”²: “Նոյն իսկ Յովհաննու Խնատասիրի, յաջորդ
դարուն առաջին կէսին մէջ այնչափ անձանթէր էր ասոր եւ “Նիկիա-
կանին մէջ եղած տարբերութիւնն” որ կրցաւ ըսել “Ուրբ Հարցն
ի “Նիկիա ժողովեալքն ասացին զնոյնքնութիւն Հօր վասն մերոյ
փրկութեան ծնաւ մարդացեալ ի Մարիամայ արքայ Առսէն Հո-
գեով սրբով . եւ ապա ի շար արկեալ թուէն զկատարեալ բնու-
թեանս մերոյ զհօգի, մարմին եւ միտս, եւ նովին մարմնով համ-
բարձեալ յերկինս, եւ նովին մարմնով զարց է ասացին”³, “Նոյնը
կ’ըսէ ուրիշ տեղ ալ”⁴: “Յետ կատարման սուրբ աւետարանին բարձր
ձայնիւ խոստովանին զուրբ հաւատն” որ յերանելի սուրբ Հարցն
“Նիկիայ տուաւ եկեղեցւոյ”, “Նոյնպէս կը խօսի 987 դարուն մէջ
Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոս: “Հարցն սուրբք, կ’ըսէ, յայտ-
նապէս հաստատեցին ի հաւատն “Նիկիական” ունել Բանին այսպէս .
“Ծնաւ, ասէ, կատարեալապէս ի Մարիամայ արքայ Առսէն Հոգեովն
սրբով, որով հառ մարմին, հոգի եւ միտս եւ ամենայն որ ինչ է
ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք”⁵: Տարբեր լոյս մը չունի
անոր որդին Վրիգոր “Վարեկացի իրեն ծանօթ Աղթմազորց մէջ”⁶:

Այսպէս տեսեց այս անձիւն ըմբռնուով նաեւ “Ներսիսեանց

¹ Բառ Հեղինակիս ժամանակագրու-
թեան + 671: Ծ. Զրտ.:

² Անշուշտ կ’սկսեալէ իւր ձեռա-
գրաց մէջ գտնուած՝ սկիզբէն պակաս այն
թուովն որ հետեւեալ խորագիրն ունի:
“Տեառն Առմիտասայ Հայոց կաթ. վասն
հաւատոյ”: Կաթողիկոսն Հանգանակն
յառաջ կը բերէ այսպէս . . . Եւ զար-
գարիմք երիւք ժողովովքս այսօրիւք ի
պատիւ ամենասուրբ Երրորդութեանն
սահմանաւ զոր եղեալ է ՅԹԵԼԸ աս-
տուածաշունչ սուրբ Հարցն որ ի “Նիկիա,
որոց գլուխն Ս. Արիստակէս հայրապետ
Հայոց մեծաց. եւ ասացին այսպէս վասն
բանին մարմնացելոյ թէ Աստուած է ի
Աստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած

ճշմարիտ Աստուծոյ ճշմարտէ, ծնեալ
եւ ոչ արարեալ. ինչեալ ի յերկնից մար-
մնացեալ մարդացեալ ի սուրբ Առսէն
Մարիամայ, չարչարեալ այսինքն խաչեալ
թաղեալ եւ յերկր առաւ յարուցեալ,
համբարձեալ յերկինս, եւ զայ գտնել
զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւո-
րութեանն ոչ է վախճան”: Ծ. Զրտ.:

³ Ճառ ընդդէմ Երեւութականաց.
տպ. Վենետ. 1807: Մատենագր. Յով-
հաննու Խնատասիրի. էջ 55:

⁴ Անդ. Վասն աւուր միաշր. էջ 106:

⁵ Մեկն. Ժամակարգութեան տպ.
Կ-Պոլս (Երթմազեղ), 1840. էջ 179
—180:

⁶ Փոքր տպ. Վենետ. 428—33: